ՀԱՍՏԱՏՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ(ՎԱՂ.) ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 22-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ /ՎԱՂ./ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Բաղրամյան/Վաղ./ համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ.

2) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ երեք հազար դրամ.

3) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ երեք հազար դրամ.

4) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիներին՝ բանկային ավանդներ և փոստային առաքումներ (այդ թվում՝ դրամական և ծանրոցային) ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ երեք հազար դրամ.

5) համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր և երաշխավորագիր տալու համար՝ երկու հազար դրամ:

6) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ հասցեի որոշում տրամադրելու համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

2. Համայնքային ենթակայության մանկապարտեզում ծնողական վճար սահմանել մեկ երեխայի հաշվով ամսական 8000/ութ հազար/ դրամ.

1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով՝

ա. Մեկ ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկու և ավելի երեխաների համար՝ 7000 /յոթ հազար/ դրամ յուրաքանչյուրից.

բ. Միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 50 տոկոսի չափով՝ 4000 /չորս հազար/ դրամ.

գ. Երկկողմանի ծնողազուրկ երեխաների, զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝ 100 տոկոսի չափով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Է. ՄԱՐԳԱՐՅԱՆ